



ԱՐԾՈՒՄ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕՐ
ՅԱՐԺՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԿԻ ՀԱՅՐԵՆԱՅՈՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԳՐՈՐ

ՄԱՅԻՍ 1858 • ԹԻՒ 5 •

ՎԱՆՏՈՐ

ԻՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՅՆ

Ի ՎԱՐԱԳ



THE
JOURNAL OF
THE
AMERICAN MEDICAL ASSOCIATION
PUBLISHED WEEKLY
CHICAGO, ILL.
1910

Subscription price, Five Dollars per Annum in Advance.
Single Copies, Fifteen Cents.
Entered as Second-Class Matter, October 3, 1902.
Postpaid by Mail, at Special Rate of Postage provided for by Act of Congress, October 3, 1917.
Acceptance for mailing at Special Rate of Postage provided for by Act of Congress, October 3, 1917.
Paid for by the Publisher, American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill.

հրաշայիբ ոչ . ընդ աշխարհիս վայելչագամ կարգ , ոչ . այլ ընդ այն իսկ առաւել , որ սքանչելին է 'ի նմա . այսինքն 'ի մարդն Աստուածաստեղծ . որ տէր եւ իշխան աշխարհի եղաւ .

Այլ մի թէ համօրէն մարդիկ մեծ եւ զարմանալիք են . ոչ երբէք , զի սովեսայն հեթանոսք համարեցան իբրեւ կաթիլ մի 'ի դուլէ . կամ որպէս յարդ անպիտան նիւթ դժօխաւատ հընոցին . հապա 'ի մարդիկ այնք եւ եթ զարմանալիք թուեցան . որոյ ծնունդ եղեւ ոչ յարեմէ՝ այլ Աստուծոյ . ոյր վասն եւ որդիք բարձրելոյն կոչեցան եւ շնաշխարհիկ գործոց մեծութեամբ այնչափ բարձրացան 'ի վեր , մինչեւ նոյն ինքն Աստուած իսկ տեսանէր , զի մարդիկ ուսմիք Աստուածայեայտ . յերկինս վերաթեւեն . ոյր վասն արժանի համարեալ եւ վտան նոցին հնչեցուցանել Դաւթեան նուագսրանաւն . « Ես ասուցի թէ Աստուածք իցէք » :

Սակայն այս իսկ են առաւել զարմանալիք . զի 'ի մէջ սքանչելեաց առաւել սքանչելիք երեւին . այսինքն ընտրելայոյն յընտիրս , արեգակունք յաստեղս . ոյր զակս աս . ր իսկ երանելին Պօղոս . « Ասողքան զասող առաւել է փառօք » :

Հայկազուն աչք , եթէ յստեղես բոլորսդեղ բժօգդ Աստեղունս Մասեաց եւ Արարատայ կամարին , զո՞ 'ի նուին տեսանես արեւանման պայծառագոյն փայլեալ . զո՞ 'ի նոյն նշմարես 'ի միջի եկեղեցաշէն հարցն գերազանդեալ 'ի հոռւի . « Աստուած պաշտութեան . եթէ ոչ միայն զՆերսէսն այն պարթեւ , շնաշխարհիկ ծնունդ . Հայաստան աշխարհի . 'ի պատուհասեալ փշալից ստեղանէ իբրեւ վարդ անուշահոտ կարմրերիեան ծաղկեալ հանգունակ հաւուն Գրիգորի . հակառակ Տէրունեան վճնոյն՝ 'ի տառասկէ թուզ , 'ի Մարինեոջ խաղող » :

Այս ընդէր , զի երեւեսցի աստ զօրութիւն ամենահնար ձեւին Աստուծոյ . որ ճարտարարուեստ իմաստութեամբ կարող է գպատուականն յառաջ բերել յանարգ նիւթոյ եւ յապառաժ քարանց յարուցանել սքանչելեօք նոր հարազատ որդիս Արարհամու հօրն մերոյ սրբոյն Գրիգորի :

Այլ իմ արդ Արծուոյս տկարանան թուիչք ընդ բարձրու

Թիւն փառաց մեծին Ներսիսի եւ ապշին աշկունք ընդ հայ-
երն ընդ պայծառութիւն լուսոյ Աստուածաման գործոց նո-
րին . առ որ գող Թէ Աւետարանին բան յանդ ելանէր . « Որ
հաւատայ յիս եւս մեծամեծս քան զնոյնս գործեսցէ . ընդ որս
գարմացի աշխարհ » . Որ արդարեւ ընդ գերմարդկային գործս
մեծին Ներսիսի՝ ոչ միայն Հայաստան, այլ եւ գարմացաւ բո-
վանդոյ Յունական աշխարհն եւ երանիս տային իսկ Հայաս-
տանեայց հօտին լինել եւ արածել ընդ այնպիսում արի եւ
քաջ հովուապետին գաւազանաւ :

Ներսէսն այն, որ մինչդեռ յառոյդաբարձ պարթեւահա-
սակ տիան, սուր յազդեր իւրում զինուորեալ ՚ի դուռն Ար-
շակայ արքային՝ անդստին իսկ փայլէր յամենափառաւոր անձն
Աստուած սփիր շնորհ Հայրապետական . ուստի յայնչափ իբր
չդերհարիւր ալեզարդ Եպիսկոպոսաց միջի՝ մի միայն ըն որեւա-
զոյն հանդիսանայր, ոչ զի համաւեռ գորով Պարթեւական
տոհմին, այլ առաւել եւս ՚ի նորատիան մանկութեան զկատա-
րելագունիցն բերելով յինքեան զշնորհ վասն որոյ արժանա-
պէս պատահէր ինքն բարոյ ոգւոյ այսինքն գերագոյն աստի-
ճանի Հայրապետական աթոռոյն . Դանիէլեան մատաւարժ իւ-
մատութեամբ դատաւոր կացեալ ՚ի վերայ ձերունեացն :

Կոյր, խուլ եւ համբացեալ Հրէատան, որ յամառու-
թեամբ ՚ի մտի եղեալ էր ոչ տեսանել եւ ոչ լսել որդւոյն Աս-
աուծոյ Աւետարանին բարոզութեան . վասն որոյ ՚ի վերուստ
անտի Հայրն իբր աղերսաբար ձայն արկանէր Հրէական ան-
հաւատ ժողովրդոց . եթէ դա իսկ է սիրելի որդեակ իմ . դմա
լուարուք հաւատով եւ մի բնաւ երկմոխք . դողին երկնաբեր
նոր սիրոյ գաշնազիր, Աւետարանին հոշտառիթ պատգամա-
ւորութեան ուկն մատուցէք, որ հանդերձեալ է միջնորդ խա-
ղաղութեան լինել ընդ իս եւ ընդ աշխարհ :

Այսպէս եւս, մի Թէ եւ Հայաստան հանդերձեալ էր
խնուլ զականջս իւր չլսել հայրականի խրատու մեծին Ներ-
սիսի, որ վասն նոյն Հոգին, որ ՚ի Յորդանան վկայէր վասն Յի-
սուսի ազաւհակերպ իջմամբ եւ աստ յեկեղեցւոջ Առաքի-

Նոյնատիպ 'ի վերայ Ներսիսի իջանելով՝ զնոյն վկայութիւն ան-
ձայն հեղաքանէր, եթէ պակէ սիրելի ծառայ իմ եւ ընտրեալ
հովիւ . դմա լուարուք, հօտ Հայաստանեայց, եւ մի լիցի . ձեզ
ստահակ ոգւով ապստամբել 'ի գորին առաջնորդութենէն . իր-
բու զՀրեական ժողովուրդն 'ի Մովսիսէն :

Ս' այելուչ է իսկ նոր ոմն հրաշալի Մովսէս 'կոչել եւ զմերն
Ներսէս . որ հանգոյն նմին թող զԱրշակունեան մեծաւառ
պոյնտն . որպէս նայն Փարաօնի, թօթափեաց յինքնէն ըզ-
ճոխագոյն զգեստ քաջազարմ պայազատութեան եւ արձակ-
եաց . յազդերէն զքաջակապ սուսերն զինուորական . ընդ ա-
ցին զգեցաւ զզէնն հոգւոյն երկնաձիր շնորհաց : Էջ 'ի-
կեանարկոյ 'ի բաձրագոյն բեմէն ձեռնադրութեան 'ի Հայաւ-
տան աշխարհ իբրու զՄովսէսն այն . Աստուածախօսութենէ
էրին Քորեթայ . հանել զՀայկական ժողովուրդն ոչ 'ի Փարա-
օնեան գերութենէն . այլ առաւել եւս 'ի դժնդակագոյն
բռնակալութեանց . այսէ՛ 'ի հնագոյն բիրտ սովորութեանց
յանքարեկարգ կենցաղավարութեանց 'ի ամարդի ընթացից
ընկերատեսաց բարուց անողորմածութեան :

Յայնժամ իսկ յասպարէզ եկեղեցաշէն առաքինութեանց
սկիզբն առնէր ելանելոյ երանելին Ներսէս . մեծ ատեն կազ-
մէր ընդ հանուր վիճակակալ Եպիսկոպոսաց եւ Երիցանց
Քրիստոսական եկեղեցւոյն . պերճախօս ատենաբանութեամբ
նոր դաշինս գնէր ընդ համօրէն ուխտս, ընդ Արշակայ Արքայ-
ին եւ ընդ բոլոր նախարարս, հաւատարմութեամբ գնալ ողջ
ստիւք 'ի շուիրս պատուիրանացն Աստուծոյ եւ մի ստերիւրել
կողութեամբ իբրեւ հինն Եսայէլ . յարդարութեան ճանա-
պարհէն :

Յիսուս՝ այն ինչ Աստուծային այցելութեամբ բժշկէր
ղպէս պէս ախտս 'ի հրեական ժողովրդոց՝ ասէր ցապառգամա-
ւոր աշակերտան Յովհաննու : Թէ գնացէք պատմեցէք Վար-
դապետին ձերում վասն իմ աւասիկ տեսանէք իսկ աջօք ձե-
րովք կաղք պնան, բորոտք սրբին, կոյրք տեսանեն, եւ այլն .
Ով ինչէր յայնժամ եւ զայս վասն Ներսիսի Աստուածախօսման

այցելութեան՝ ասել այլ եւս եղանակաւ բանից . թէ զնացէք պատմեցէք Յունական երկրին եւ այլ աշխարհաց . եթէ հրաշա-
ձեռն այցելութեամբ Ներսիսի Հայրապետին Հայոց՝ բազմա-
դիմի աետիւ հիւանդացեալն Հայաստան թօթափեաց զմա-
հիճն իւր . կծկեալ եւ գօսացեալ ձեռք անողորմից՝ բանիւ
Ներսիսի առողջացեալք պարզեցան եւ կարկառեցան առ տը-
նանկս եւ աղքատս . յանցս ճանապարհաց անկեալ հաշման-
դամք յայցելու բազուկս Ներսիսի բարձեալ եղան յանկելաւ
նոցս . Անբուժելի բորոտք . որք իբրեւ պիղծք եւ զաղիւրք
յանկարեկիր ձեռաց եղեալք ՚ի կողովս ձգեալ լինէին յան-
մարդի լերինս , մինչեւ կամ ՚ի կուր գաղանաց լեալք կամ
սովալլուկ չարչարանօք մեռանէին անդէն , ՚ի գթոտ դիրկս
Ներսիսի գգուեալք՝ ժողովէին ՚ի դարմանոցս , ուրանօր պա-
տանաւ եւ ձիթով եւ գինեաւ խնամեալք ընդ բազոր պաշա-
պանութեամբ նոր Սամարացոյն Ներսիսի զիւրեին մարմինք
նոցուն յախտալից ցաւոց եւ լուէին նուաղաձայն հեծիւնք
նեղեալ անսպաւէն անձանց :

Ինձ թուի թէ Եսայեան պատգամ, որ տիրապէս առ Քրիս-
տոսի այցելութիւնն ակնարկէ՝ վայելչապէս իսկ եւ առ Ներ-
սէսն վերաբերի, որ եղեւ խոնարհաց եւ լքելոց օգնական եւ
որոմեւոց վասն կարօտութեան յարկ ապաւինի . ոգի զօրա-
վիգ՝ մարդկան զրկելոց եւ աղբիւր առատահոս ապաւէն
ծարաւելոց :

Հիւրասիրին Աբրահամու բաւական լինէր մի վրան հովա-
նի առնել հիւրոցն . իսկ ընդարձակ եւ ողորմած սրտին մերոյն
Ներսիսի անբաւական թուէին հազարաւոր վանորայք շին-
եալք եւ կառուցեալք ՚ի վերայ բարձու լեռանց Հայոց . ՚ի-
միջի վայելչավայր հովտաց . որոց զամենեցուն հիմունս հաստա-
տէին վաստակաւոր ձեռք մերոյն Զօրաբաբէլի լինել ասպն-
ջական . ոչ միայն յաշխարհէ սոսկացեալ վանական եղբարց , այլ
եւ բազմանցից աշխատեալ ուղեւորաց . առաւել եւս քան
զանձուկ վրանն հիւրամեծար Նահապետին , ընդունող եւ
մարդասիրազոյն գտեալ :

Թէպէտեւ տաքջազն Տրդատաւ, Գրիգորիւ եւ առ նոյն որդւոլք եւ թուամբք սկիզբն լինէր վանական շինութեանց կամ եկեղեցազարդ բարեկարգութեան. բայց անբարեհաւարանց թուլամորթաց անփոյթ արարեալ գողթէ՝ իրեւ ճրագ առկայծեալ փոքր մի եւս ՚ի շինումն ժամանէին. իսկ առ Ներսիսիւ եօթնաջահեան լուսով յանկարծ վառեալ պայծառացան նուազանշոյլ ճրագունք. Հայոց եւ առ նորին ժամանակօք իսկ մուտ տունն ՚ի Հայաստան օրէնք մարդասիրական բարոյից. Մերժեցան անդթութեան բարացեալ սղիք եւ ՚ի տեղին փոխաբերեցին փափուկ եւ մարմնեղն սիրտք. անարգեցաւ մարդատեաց բարուց սովորութիւն՝ եւ պատուեցաւ ընդ այն ընկերսիրական օրէնք. խոտան համարեցաւ ազահութիւն արծաթսիրութեան. պատուեցաւ զուարթամիտ տուրք առատածեանութեան. կաշկանդեալ ոտք անպցելու խտապտոց՝ ընթացան ՚ի բանութեւ առ հիւանդս ՚ի տեսութիւն Բրիտանի. Միով բանիւ ասացից, մերկ, քաղցեալ, ծարաւի, անտերունչ, բացթեւայ, հիւանդ շրջէր Յիսուս ՚ի հրապարակս եւ առ դրունս Հայոց. չէր որ հայեր ընդ տարածոյժ տեօիլ կարօտելոյն կամ զգեցուցիչ լինէր մ'ըկութեան, կամ քաղցելոյն հաց կարկանէր. կամ բաժակ մի ջուր ցուրտ, կամ անտերունչ որբոյն հայր լինէր կամ բացթեւայ մնայելոյն առնն պարտատէր եւ կամ հիւանդ աչելոյն եւ անկելոյն ՚ի մահիճս աչելութեամբ մխլթարութիւն տունէր.

Իսկ ՚ի Ներսիսի զուարթածեան արոց յոյժ հարսանցատաղ բառն Յիսուս. լիացաւ հացիւ կշտապինդ վայելեալ, զովադատ ՚ի ցուրտ ջրոյ, ծոծկեցան անդամք նորանոր հանդերձիւք, պաշտպանեցաւ առ թեւօք հայրական խնամոց, ժողովեցաւ օտարն ՚ի առնն իրեւ համարիւն ընտանի. որ հիւանդն էր ՚ի մահիճս առողջացեալ կանգնեցաւ.

Հայկազն, ընթերցող, զինչ կոչեցից զՆերսէս. արդիօք միայն հայր եւ պարագլուխ եկեղեցաւէն հանցն. չիցէ արժան յառելից ասել եւ հայր աշխարհաշէն. բարեկարգիչ Հայաստանեայց. պաշտպան նեցուկ Արշակունեան Արքայից. Ո՛չ

իրբեւ զՆերսէս հաշտարար միջնորդ 'ի մէջ կայսերաց եւ Ար-
քայից մերոց . ով իրբեւ զնա հոգատար հայրենի ազատ թա-
գաւորութեանն . ով իրբեւ զնա անձնանուէր քաջարանջ արիա-
կան սրտիւ . որ 'ի բաց թողոյր զհայրապետական փառաց
շուք . խոնարհեալ դեգերէր 'ի դրունս մեծազօր կայսերաց
մինչեւ 'ի շնորհս իւրումն աշխարհաքարոզ առաքինութեանն
թագընկալ պարգեւոք դառնայր 'ի Հայաստան , պսակել այնու
զան սրժան գլուխ ապաշնորհին Պապայ :

Մովսիսեան Աստուածազերս բազուկք յաղթական առնէր
զգօրավարն Յեսու 'ի վերայ Ամաղէկացոց . այսպէս եւս հրա-
շարդն Ներսիսի համբարձեալ զբազուկս 'ի գլուխ Նպատ
լերին մշտամուռնչ աղօթիւք զօրանային յասպարէզ մարտից
Ջերաւ դաշտին երկօքին Հայկազուն Յեսուք Մուշեղ եւ
Սեբատ քաջ զօրավարք . Հայոց եւ ցորչափ ձեռք Ներսիսի
կոյին տարած 'ի յերկինս՝ յաղթական հանդիսանային 'ի վե-
րայ Ամաղէկեան սեւագունդ բանակին Պարսից :

Էջ այտի , Մովսէսդ Հայոց , այլ մի եւս յամեր յաստուա-
ծախօս աղօթոյ 'ի նոր Սինա Նպատդ . էջ , զի աւասիկ ան-
բլնեցաւ Պապն , որպէս յայնժամ Խորայէլեան ժողովուրդն .
էջ եւ բազմեաց յընթրիս մեծահաց 'ի գիւղաքաղսքն Խախ ,
զոր պատրաստեն քեզ ապերախտ ձեռք :

Բարձրաբազուկ ձեռք պարթեւին ներսիսի համբարձեալ
յաղթս իրբեւ նեցուկ ամրապինդ էր յաջ եւ յահեակ հա-
աբուն դաւազանին հզօր իշխանութեանն Արշակունեաց
աւանդ , հատանել կամեցաւ զայն ապերախտութեան տապար
ձեռքն Պապայ :

Իշանէր մեծաւ զուարթութեամբ 'ի նպատ լեռնէն երա-
նելին Ներսէս , զուարճանալ 'ի սրտին մինչ տեսանէր թէ գուն-
դըն Պարսից իսպառ պարտեցաւ 'ի քաջացն Հայոց , երթայր
բազմէր յայն ընթրիս , որում իրբեւ վերջին պատգի փոխա-
քէր անձկանօք որպէս զՏէրն . նոր Յուդաս սրտասուէրին հո-
լանեալ սպասաւորէր կեղծաւորութեամբ իրր 'ի պատիւ երե-
ւոց . մեծաշուք Հայրապետին . ո՛հ , ընդ անուշակ անապակ գին-

ւոյն խառնէր անօրէն ձեռք զլեղի կոտինդ մահաւիթ, լնոյր
մատուռակէր զբաժակն այնմ, որ թերեւս խոստացեալ էր իր-
րեւ զորդիսն Զեբեթեայ ընդ քրիստոսի ըմպել զբաժակն
չարչարանաց. ուստի առանց այլայլելոյ դիմացն զուարթահայ-
եաց աչօք առ ընկալաւ զմահագոյժ գինին, իբրեւ զանուշակ
օշարակ արք եւ ծծեաց ակործանօք մինչեւ ցվերջին կաթիլ
գաւաթոյն : Մինչդեռ ընդ աստուածահոտ շնչոյն տոսկաւ
տակաւ նուաղեալ քաղէին ոգիք Ներսիսի, գոգ թէ եւ Հայ-
աստան համօրէն իւր 'ի հոգեվարութեան հասնալ զոյգ ընդ
նմին մեռանել պատրաստէր. եւ այն ինչ հսկողագէտ աշխուհք
կափուցանէին սրտառուչ խռովութեամբ դարձուցեալ զե-
րեսս յԱյրարատայ աշխարհէն՝ աւանդ, գիշերանայր տնդէն
եկեղեցին Հայաստանեայց. եւ յորժամ ազօթամբարձ բազու-
կը բռնալցեալք յուժոյ 'ի վերայ կրծոցն կծկեալք ամփո-
փէին աւետարանակիր. կործանէր 'ի վայր յայնժամ բարձ-
րացեալ գաւազան Արշակունեան թագաւորութեանց. զոր իր-
րեւ նեցուկ անկործանելի պահէին բազուկք Ներսիսի : Ընդ
այս աղէտալի դիպուած հայեցաւ 'ի վերուստ ողբաց երկինք.
հեծեաց Այրարատ, հառաչեաց Մասիս, լացին անտիրունջ որ-
բացեալ որդիք : Մեռաւ Ներսէս, այլ եւս ո՞վ հոգացէ զնորին,
մեռաւ Ներսէս, այլ եւս ո՞վ խնամ տարցէ նեղեալ անապաւեն
վտաղներոց. մեռաւ Ներսէս, այլ եւս ո՞վ հաստատեցէ կամ
դրեցէ յապառաժ սիրտս օրէնս ողորմածասիրութեան. ո՞վ
շինեցէ զհիւրանոցս, զանկերանոցս եւ զայրենոցս, ո՞վ ձեռն
կարկառեցէ տնանկին, ո՞վ երթիցէ 'ի անս բանտարկելոցն եւ
հիւանդին. ո՞վ պատան դիցէ վիրաւորելոյն կամ դարմանել
լիցի առ 'ի մարդկանէ հալածեալ բոբոտին :

Այսպիսի դժպատեհ մահուամբ եւ Ներսէս յաշխարհէս
Հայոց. որոյ սուրբ յիշատակ քստմենցուցանեն մինչեւ ցոյս.
Լիտեան զոսկերս Հայկազանց : Այս յիշատակ տխուր ցորչափ
Արծուեանս իսկ ողբալից վերջին յիշատակօք հնչեցէ յա-
կանջս Հայոց. Թող կարգացեն նզովս եւ օրհնութիւն. փառք

պատիւ , գովութիւն , պարծանք , եւ օրհնութիւն յաւելցին յամենայն բերանոյ 'ի բարձրափառ գլուխն 'Ներսիս . անարգանք , պարսաւանք , կշտամբութիւն եւ նզովք թափեցին 'ի վերայ դադաթան . ապստամբին Պապայ . փոխանակ զի ոչ յիշեաց առնել զօղորմութիւն . եւ հալածեաց զայրն որ զարդարիչ էր Հայաստանեայց եկեղեցւոյ . ուստի երանիք թէ սատակեալ լինէր յիշատակ նորին յերկրէն Հայոց ըստ մաղթելոյն Դաւթի . որով գեթ չբերէր ամօթանս թորգոմածին պարզերես Որդւոց :

Հանդէս պերագոյն Աստուածպաշտութեան երանելոյն 'Ներսիսի եկեղեցազարդ . հօրն , բարձրագոյն է քան զամենայն ճոռս , առ որ չհասանեն թռիչք թէ եւ Արծուեան իցէ . այս դուզնաբեայ բանք մեր բաւական համարեցին . ապերախտ եւ պարտաւոր որդւոցս իբր . երախտահատոյց գոլ այնպիսում չնաշխարհիկ Հօրն :

Այլ մեզ աստանօր մխիթարութիւն մեծ է , ով համօրէն ուխտք Հայաստանեայց եկեղեցւոյ , յուշ բերելով զօրինակ ողբոյն Խորենեան , որ 'ի մահ սրբոյն Տրդատայ , « Եթէ ընդ փայտ դալար զայս արարին . ընդ չորն զինչ լինիցի » :

Եթէ ընդ ընտրեալն Աստուծոյ սքանչելին 'Ներսէս . որ գոգթէ նոր իմն Լուսաւորիչ յայտնեցաւ նսեմացեալ եկեղեցւոյն Հայաստանեայց զայսպիսի անօրինակ փոխարէն հատուցին նախնի դարուն ապաշնորհ ծնունդք , զինչ ապա ընդ չոր եւ բոլորովն դօստցեալ յետին որդւոցս առնիցեն այժմեան դարու ապերախտ որդիք . որ արդարեւ 'ի դալարութենէ Աստուածպաշտութեան , սիրոյ , սրդարութեան , եւ առսքինի վարուց բնաւին ցամաքեալ եւ անպտղութեամբ չորացեալ կամք . որով ճանաչիմք գոլ որդիք անհարազատք Հօրն 'Ներսիսի եւ ոչ հանդոյն նմին ծաղկաւէտ պտղովք բարդաւաճեալ 'ի հանդէս Աստուածպաշտութեան հայրենի եկեղեցւոյն : Ուրիմն մխիթարիցուք եւ մեք մերով վտանգիւքս եւ մի լիցի երբէք անհամբեր ոգւով կամ անյուս ջրթամքք տրտունջ բառնալ իբր այն թէ փոխարէն երախտեաց կամ արժանաւոր վարձատրութեանց :

բամբասանս, զրպարտանս, չարախօսութիւն, ընդ ունիւիք 'ի բե-
լանոց բազմաց :

Այսու իսկ երանելի եմք յոյժ, յորժամ անյիշաչար ոգւով,
աննկուն արիութեամբ ասնկցեմք այսպիսի խաղից. մանաւանդ
մինչ ապարդիւն գործովք աննման եմք հարցն բարուց. որով
թողումք արժանաւոր զոլ մեզ պսակ սգարդ վարձուց. այլ եւ
բիւր բամբասանաց եւ պատժոց արժանիք իսկ 'ի լսել եւ կը-
րել :

Առաւել եւս, դու Արծուիդ իմ, 'ի վտանգս քո մխիթարեաց
յոգիդ նման խորենայ համբերող ճերտն. եւ եթէ հարազատ
ընտանի ես Տեառն քո՝ մի սրտմտիր ընդ կոչիլն քո Բէեզզե-
բուդ կամ ընդ հալածանս : Եւ եթէ դոյզն ինչ նման փոքու
սատեղ նշողիւք նշմարիս 'ի կաճառս հանդիսից հայրենաշէն
առաքինեացն՝ զայն եւս ծածկեաց ընդ բողով ծառայական
խոնարհութեան եւ ըստ Տէրունեան խրատուն. գողջիր գգեղ
ծառայ. անպիտան, զոր պարտնէր առնել արարել, եւ պար-
տաւորիս առնել միշտ սիրելի հայրենեացդ :



Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԼՈՒՎԻՆԵԱՅՆ

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ ԵՐԵՒԱՆԻԵԱՆ

Հայկազարմ քաջացն անցեալ 'ի պարագլուխ 'ի միջի թու-
գակալ հայրենաշէն առաքինեացն, վեհ եւ պայծառ փայլեալ
ամենայնիւ. բան զՊարոյր եւ զԱրամ եւ քան զՀայկն իսկ հա-
րրատագոյն եւ խոհեմագոյն. դիւցազնական քաջութեամբ ան-
հնմեմատ ոչ միայն 'ի միջի զօրաւոր սկայիցն Հայկայ. այլ եւ

անցեալ զանցեալ քան զՅունական քաջան . գողթէ նոր ոմն հայ Աբիւլէս ընդ Աժդահակայ իբրեւ ընդ Հեկտորի դիւցազնաբար մեծամարտեալ : Հայկազանց բազմաթիւր ժողովրդոց լայնատար տեղի պատրաստեաց միայն աշխարհաշակ տէգն Տիգրանայ . որով իսկ իմաստախօս առաժն առ սա վերաբերէր . « Սահմանք քաջաց զէնք իւրեանց » :

Իստ խորենոյ պատմագրին նախանձեղի եղեւ ինքն եւ ժամանակն իւր հանուր աշխարհակալ Թագաւորացն եւ յետնոցս իսկ ըղձալի էր յոյժ , Թէ պատահէր յաջողութեամբ : Եթէ առ ընդ աղօտ փայլումն նոր Թագին Վարդարայ դուարձանային այնչափ արծուատես աչք ծերունոյն . մինչեւ ըղձանայր ի սրտին ինոյն ժամանակի ծննդեամբ գալ յաշխարհ . բանի ապա արեւափայլ Թագն Տիգրանայ մեծին պայծառագոյն Թուէր փափագող աչացն այնմիկ , որ յաճախ հայել ոչ յագէր ընդ ծիրանափայլ ծագման շողջողումն արշալուսոյ Թագին Հայկազնեան :

Այն ինչ քաջին Տիգրանայ զտէգն ի ձեռս առեալ չափել նովիմք եւ ընդարձակել զեզերս հայրենի բնակութեանց . կասկածեալ մեծին Ալեքսի արքային Պարսից . Թէ մի գուցէ երկայնաձայր սայրասուր տէգն Հայկազնոյն չափեալ հասանիցի մինչեւ ցգահն իմ արեւելեան . ուստի խոնարհէր կապիլ ընդ մերոյն Տիգրանայ դռնադիր բարեկամութեամբ : Աստահա բարձրագոյն փառօք պանծայր եւ երջանիկ լինէր Հայաստան մինչ վեհն Ալեքս իբրեւ նեցուկ անդրդուելի կցէր ընդ զօրութիւն իշխանութեան Հայկարմատ գաւազանին . Ալեքոսն այն . որ ալպ եւ օրինակ էր Քրիստոսի աշխարհազրուաւ զօրութեան . որոյ իսկ ըստ մարգարէին զաջոյ ձեռանէ կալեալ հնազանդեցուցանել առաջի նորա զազգս ամենայն : Այն նուաճեալ հնազանդէին առաջի Ալեքսի բազում ազգ եւ ազինք . այլ լիւ , եթէ ոչ հզօրաձեռն աջակցութեամբ քաջին Տիգրանայ :

Աժդահակն այն խրոխտ հանապազ ի խեթի լեալ պաշտօնէր յանձին երկիւղալից տարակուսանօք . եւ զերազն այն

սքանչելի յանուրջս տեսանէր . աշտանակեալ 'ի վիշապ Հայկ-
ազն . Տիգրան, արծուանման սրացեալ յարձակէր 'ի վերայ իւր
մերձ 'ի յապարանս եւ տիգրաւ նիզակին խորագոյն խոցէր
մինչեւ արեան յորդագոյն ճապաղէք ընդդէմ յառաջս արեւ-
գանկնատես ապարանից իւրոց, դարձուցեալ համակ 'ի ծով արե-
ւան կարմիր :

Արդարեւ դոգթէ Աստուածային իմն սքանչելեօք հրաշա-
պէս երեւէր 'ի տեսեալն Աժդահակայ Արարատեան Դիւցա-
զանց ծնունդ . կինն այն ծիրանագգետ , արկեալ զիւրեաւ
տե՛ռ սպիտակաւայլ, աչեղ բարձրահասակ եւ կարճայտ բազ-
մեալ 'ի բարձր գագաթան լերինն Մասեաց . յերկանց ըմբռ-
նեալ ծնանէր յանկարծ զերիս գեղահասակ կատարեալ դիւ-
ցազունս . զհսկայն Հայկ եւ զԱրամն բաջ եւ զվեհն Տիգրան
որք յառիւծ , յինձ եւ 'ի վիշապ հեծեալք յարձակեցան 'ի-
վերայ Բերայ, Նիւբարայ, Բարշամայ եւ Աժդահակայ, հայրե-
նի 'ի բնականունդ սահմանացն 'ի բայ խորտակելով զնոցին
բռնութիւն :

Արարիտօք Աբիւլլէսի, այսպէս եւ մերոյն Տիգրանայ հոմե-
րեան հագներդութիւնք պիտին , պտակ դրուտոց արժանա-
պէս հիւսել վեհապանձ գլխոյն Տիգրանայ . այլ շատ լիցին անտ
խորնոյ մերոյն Հոմերոսի . որ քաջահար նուագաւն մտեալ 'ի-
հանդէս հայրենաշէն Առաքինւոյն, յորինեալ պտակ զարդարե-
ղճակաւն յաղթական : Արանց , ասէ , կացեալ դուլիս, այսինքն
քաջազանց արկասիրտ գլդին Հայոց իւրեւ . յառաջընթաց դո-
րավար 'ի գլուխ անցեալ յաջողածեռն յաղթութեամբ զազ-
գըս մեր բարձրացոյց փառօք գեր քան զՄասիս եւ զազատ
ազգս հզօրս իբրեւ հարկատու հնազանդեցոյց ընդ լծով ծա-
ռայութեան . լցեալ հարստացան առ ժամանակօք սորին քաղա-
քացիք եւ շինականք միանգամայն . Մեծերս ոսկւոյ եւ արծա-
թոյ եւ ականց պատուականաց դիզեցան 'ի գանձարանս Հա-
յոց աշխարհին . արանց եւ կանանց շքեղապէս զարդարեցան
փայեղագոյն հասակք . որով , ասէ , տգեղագոյնքն անգամ իւր-
բեւ զգեղաւորս երեւելին սքանչելիք , եւ գեղաւորքն ըստ ժա-

մանակին առ հասարակ դիւցազնացեալք :

1) Ենուորական հանդէս Տիգրանայ գնդին ահեղ եւ զարմանալի էին ըստ իւրանքանչիւր կարգի, հետեւամարտիկ զօրքն, ասէ. համակ ձիաւորեալք եւ պարսաւոր խումբն առ հասարակ իբրեւ զնախնին Հայկ կորովածեուն դիպաղեղունք. եւ շերտաւոր տապարազէն գունդն ՚ի սուր եւ ՚ի տէգ նիզակի շրջեղապէս վառեալք, մերիքն վահանօք եւ զրահապատ զգեստիւք անդձեռի ամրութեամբ պատասպարեալք :

Այք ասէ յորժամ ՚ի մի վայր հասեալք խմբեալք պատրաստէին ՚ի մարտ, բաւա կանէր միայն տեսիլն ահեղ շահաւորն զթշնամեացն գունդ ահաբեկութեամբ հալածել :

Ինդ այս մի դու զարմանար, զուարճասիրտ ընթերցող, զի բազում աշխարհակալ պետք զոյն հանդէս զինուորական նոյն օրինակ կազմէին որպիսեօք Աղէքսանդր եւ այլք. այլ յաւետ ընդ այնա զարմացիր յոյժ, որ միայն սեփհական ձիրք էին վեհանձնական ոգւոյն Տիգրանայ. զոր հակիրճ բանիւ եւ եթ հռչակէ խորենեան գրիչն. « Խաղաղութեան եւ շինութեան բերող, իւղով եւ մեղու զհասակս ամենեցուն պարարեալ » : Ո՛վ մեծի անպայման գովեստիս, գող թէ ծերունին Մովսէս զաւանցեալ է ՚ի բանս իւր աստանօր. մի թէ եւ դիւցազն Տիգրան նոր ոմն հրաշալի պատգամաւոր էր յերկնուստ կամ իբրեւ զնորածին մանուկ արքայն Բեթլէհէմեան այրին բերող եւ աւետող խաղաղութեան հանուր աշխարհի եւ կամ իւղով եւ մեղու շնորհատուր եւ կենածիր բանիւ Աւետարանին պարարող զհասակս հաւատացելոց ՚ի չափ կատարմանն Քրիստոսի : Այո՛, եթէ ոչ ՚ի խաւարածնունդն հեթանոսական դարուն պատահէր ծնունդն սբանչելոյն Տիգրանայ՝ իրաւամբք համարէի զնա գող բերող խաղաղութեան. թէ ոչ հանուր տիեզերաց ըստ ոչ զօրելոյ մարդկային ապիկար ուժոյն, գեթ մեղքում Հայաստան աշխարհի միայն : Յայս քակ աղնարկէ հոգի ախօսն Պօղոս. « Հեթանոսք, ասէ, որ զօրէնս ոչ ունէին, բնութեամբ օրինացն գործեցին » : Հայկազն Տիգրան թէպէտ եւ հեթանոս, այլ հետեւող բնական օրինացն մտաց, որ իբրեւ

դատարանէ էր նմին յառաքինի ընթացս, եթէ ոչ այսպէս, ընդէր ապա իբրեւ զերկնաւոր Հայրն գութ խնամակալութեան ունէր նա 'ի վերնայ հասարակաց ընդ էր իբրեւ Սօղոմոն էր արդարադատ, եւ զհարգ զարքայական մեծավայել Ճոխագոյն կենցաղ չափէր ընդ հոսարակաց հաւասարասէր կշռութեամբ. աննախանձ ոգւով չխանդար բնաւ ընդ լաւագոյնն որք երեւելի էին յիւրումն տէրութեան կամ գործովք արիւտական քաջամասնութեանց եւ կամ մեծութեամբ բազմագանձ հարստութեան. որպէս Սաւուղն այն, որ սաւղութեպէտ Մովսիսեան օրինօք դատարանակեալն էր. այլ խանդայր յոյժ ընդ յաջողութիւն յաղթականին Դաւթի :

Չարհամարհէր, ասէ, երբէք զնուաստն, այսինքն զչինուկանս. անարգամեծար՝ առաքինութեամբ զնոսին եւս իբրեւ զքաղաքացիս 'ի պատուի պահելով, առ հասարակ դգեատ իւրումն զուարթալին 'խնամոցն տարածանէր 'ի վերայ նոցին. գիտելով հաւաստեալ թէ՛ եւ նոքին զանգուած են 'ի նմին հողոյ եւ գուցէ վարժագոյն եւս քան զՍօղոմոն ընթերցեալ զգիրս օրինաց մտացն՝ ասէր ընդ նմին. « Ե՛մ ե՛մ եւ ես մարդ մահկանացու հանգոյն ամենեցուն ծնունդ հողածին եւ այլն » : Ար այս իսկ է մի միայն ցածուցիչ ամբարտաւան ոգւոյ աշխարհակալաց 'ի մեծամիտ բարձրութենէն. ոյք չկուին բնաւ լսել զիմաստնոյն խրատ. « Կառավար զքեզ կայսրցին, մի բարձրավեր, լեր 'ի նոսա իբրեւ զմի 'ի նոցանէ. կամ « Արչափ 'ի մեծութիւն հասանիցիս, 'ի խոնարհութեան կայ զանձնքոյ » : Չայս պատուէր խրատու չիւ Սօղոմոնի դրոշմեալ 'ի յաւերժագիր արձան, արագ ընթեռնայր զայն վէշն Տիգրան 'ի մարմնեղէն վէճն սրտին փորագրեալ Աստուածուած անտի. որով չափ եւ կշիռ եղեալ իւրումն մեծութեան եւ մտացն՝ չկամէր ամբարտաւանիլ բարձրավիզ դուռնութեամբ 'ի կառավարութիւնս մեծազօր թագաւորութեանն :

Բաջ նկարագիր չնախարհիկ բարուց զիւցաղնին, չհամարի բաւական այսօրիւք եւ եթ վայելչապէս հանդիսացուցանել 'ի միջի Հայկազուն քաջաց զիւր սիրելին Տիգրան. այլ եւ

յառ ելու ասել թէ 'ի ցանկական կիրս մարմնոյն չափաւոր էր յոյժ : Յայնչափ հրամանատար մեծութեան իւրում կարող էր իսկ առաւել քան զիդ ասէրն Սողոմոն զընդարձակութիւն պալատան իւրոյ ընդ շուշալական ճոխութեամբ, այո է բազմութիւն խոտորեցուցիչ կանամբք եւ հարձօք, զվայրն արքայաբընակ տանն առնել միանգամայն բնակութիւն մարդագէմ օձից եւ կարճաց, ընտանութեամբ կեալ ընդ բազմավտանգ մահունս, այսինքն ընդ պատրիշ կայիւսձին դաւաբ : Այլ առաւելեալ սա 'ի մասին ժուժկալասէր ողջախոհութեանն, ոչ զնոռն իմաստնոյ կրելով եւ ոչ 'ի գրաւոր օրինաց անտի դատարակեալ. հապա բնականաւն եւ եթ ասնձեաց զկիրս մարմնոյն. որով իսկ յաղթող աշխարհակալ անուանել պարտէ զմեծն Տիգրան քան զՍողոմոն : զի դժուարագոյն եւս էրուռն յարձակման կրից միայնոյ անձին յաղթել քան 'ի մարտ պատերազմի ընդ բիւրաւոր քաջագէտ մրցիլ :

Այսպիսի ահա եւ յաւետ քան զսոյն վայելուչ երանդօք փայլէր պէս պէս բնաձիր առաքինութեամբ Տիգրանայ ոգւոյն աշխարհատեսիլ պատկեր. իսկ մարմնոյն ճոխադարդ կերպարան, գոգ թէ համապատշաճ էր ոգւոյն. փառահեղ մեծաւ պարան, գոգ թէ համապատշաճ էր ոգւոյն. փառահեղ մեծաւ վայելուչ տեսեամբ Հայկայ հաւուն իւրոյ նմանէր իսկ. խորտեսաշ նման Դաւթի եւ աղէքեկ ծոյրիւ հերաց վայելուչ տախակափայլ շքով, երեսօք զունեան, գոգ թէ Նկարեալ էր Ապղեան ճարտարարուեստ գրիչ, աշխուհքն անուշահայեաց բոտ սարսփի մեղուին. թիկնաւետ եւ անձնեայ լոյնականարուսովք. հասակաւ առոյգ քարաբէւ նման սօսւոյ զեղաշիտակ զեղեցկոտն արագ աշարժ իբրու գոյծեամն 'ի վերայ լերանց թեթեւաճեմ, եւ այնորիւք ամենայնիւ պերճադեալ՝ որ ինչ մարմնոյն պատշաճին վայելչական ճրից հանգամանք :

Ինդ եղբօրն աննման զուգեցի թող սատանօր եղբայրս՝ Սերքեռն Տիգրանուհւոյն առաքինական հանդէս, որ զեղեցկին էր 'ի տիկնայս եւ իմաստուն խոհականութեամբ առաւելեալ քան զհամօրէն կանայս Հայոց աշխարհին : Զհանդէս հայրենափրութեան սորին հաւասար ընդ եղբօրն հոգակել պատշա

Ճագոյն է իսկ . զի ո՞րք . ի կանանց , փառասէր , փափկասուն . զարմից թող որպիսեօք Հայ թագուհիս . որ զփառս Տիկնութեանն մերժեաց իրաւամբք զամուսնական լծոյն զկաշկանդիչ կապըն անբաժան միութեանն , սիրեաց յաւետ զհայրենին եւ ըզհամարիւն հարազատն իւր . զի գէթ հնարս հնարեսցէ ապրեցողսնել զեղբայրն եւ զողջոյն իսկ հայրենածնունդ զորդիս ի մահ սշունչ փնմանէ վիշապին Աժդահակայ . այն՝ որ կամէր ի ձեռն գորովադէտ բեռն Կաւել զՏիգրանն եւ բանալ խորհուրատ մեծ առաջի հսկայաքայլ ոտից հայկաճետ գիւցագնոյն . վա՛շ , յիմաստուն կնոջէ անտի իբրեւ զանխեղահաս տղայ պատրեալ անկաւ . ինոյն որոգայթ , զոր լարեաց վասն Տիգրանայ :

Սյապէս , առաքինոյն պաշտպան Աստուած է . թէ եւ կաթիլ մի ի դուլէ համարի յաջս նորա հեթանոսական կռամոլութեամբ եւ չիցէ հաւատովք լուսաւորեալ որովք կարիցէ ճանաչել զԱստուած կամ լբեւ միմիայն ճշմարիտ Աստուծոյ երկրպագութեամբ պաշտօն հարկանել :

Հայեցարուք աստանօր ի վերջաբան Ճառիս , հայկազուն իշխանք . Տեգրանայ վեհին հայրենաշէն առաքինութեան հանգէս սիրելի լիցի ձերումդ աչաց . նմանօղ լերուք նմին պանծալի գործոց հայրենապաշտպան քաջութեանց . Եթէ սիրելի իցեն ձեզ աշխոյժք արիական բարուց եւ կամ հանճարեղ խոհականութիւն՝ զուարճացարուք յեռանդուն սիրտս յիշատակօք վեհին Տեգրանայ եւ յորդորեալ ախորժեսջիք այնպիսի այր լինել : Ոչ հանգոյն նմին հաստաբուն նիզակաւ վիշապին Աշդահակայ զխարդախ զերիկամունս եւ զթորսն միանգամայն իսրտէն իբաց քաշելով վայրախտել . այլ գերիկամունս խորամանկ խարէութեան , զլարեալ որոգայթ ոտից , զգաղտնի դաւաճանութիւն նենգութեան մեռուցանել ճշմարտութեան նիզակաւ ճակատ առ ճակատ յայտնապէս մարտ յօրինելով :

Իխորժեցէք դարձեալ չամբարտաւանից երբէք կամ զակատիւ զհետ փառասիրութեան եւ կամ մեծամտիւ չճանաչե

լով զչափ անձին . թէեւ մեծութեամբ , ճոխութեամբ , իշխանութեամբ , արիութեամբ հաւատար հասանիջիք Տիգրանայ քաջին : Ախորժեցէք նաեւ նորին աննախանձ բարուց լինել հետեւող չիտանդալ երբէք ընդ յաջողութիւն բախտի լաւագու-
նիցն կամ ընդ յառաջադիմութիւն միմեանց : Եթէ հաւա-
տամք հաւաստեալ , թէ մեծութիւն , փարթամութիւն , իշ-
խանութիւն , հանձար , իմաստութիւն , արիական քաջութիւն .
եւ այլ գովանի պարգեւք մեծամեծք : Աստուածային ձեռա-
նէ անտի բաշխին յարժանաւորս . զի սպա իրաւունս ունի
պարծիլ ապիկար մարդն կամ նախանձիլ ընդ ընկերին պա-
տիւ :

Ախորժեցէք յաւեոյ յոնձին բերել զարդադասէր ոգին
Տիգրանայ . ոչ աշառել յատենի կրծելով կաշառս անօրէն ձե-
ռօք եւ չողորմել տնանկին սնդամ յորժամ անիրաւ իյի :
Գուժ եւ խնամ տարածել հայրաբար ի վերայ հասարակաց .
ընդ աւագն քաղաքացին եւ ընդ նուաստն զեղջուկ միով մար-
դատիրական ակամբ հայել . զի այս խկէ Աստուածական իմե-
վեհանձն առաքինութիւն . որ զսիրտը իւր փառաւորս կացու-
ցանէ ի կաճառս իշխանաւոր արանց եւ այսպէս ի գրուագոս
դուռառից քաջապանձ գործոց Տիգրանայ արժանաւորք հա-
մարին եւ նոքին եւս ի սիրաբան զրջաց յաւերժամեռեան յի-
ատակօք ցյաւիտեան անմոռաց արձանադրիլ :

Ախորժեցէք առաւել եւս , իշխանք Հայոց , նմանող լինել
Տիգրանայ պարկեշտ , բարեխառն եւ սակաւապէտ կենցաղա-
վարութեամբ . եւ մի զառաժանել երբէք ի շուայլական պէս
պէս զեղխութիւնս : Ի կերակուրս եւ յըմպելիս համեստաբար
վարեցարուք . եւ մի անչափապէս թմրեալիք ի խրախճանս մին-
չեւ եւ ձերն հատանիցի գլուխ ի բրեւ զհողեփեռնեայն : Եթէ
առաքինւոյն Տիգրանայ դատարակք եղեն միայն օրէնքն
մտաց չափաւոր լինել ի ցանկութիւնս մարմնոյն . քանի՞ սպա
ձեզ դատարակք լիցին թող նոր օրէնքն : Աւետարան եւ
Պօղոսն պատուէր չտանել խնամ մարմնոյ ի ցանկութիւնս :

Այս յորդորք 'ի մէնջ շատ լիցին յունկս հայկազն իշխանաց . նախանձաւոր լինել առաքինի վարուց մեծին Տիգրանայ . թէ բաց եւ կենդանի իցեն նոցուն ականջք 'իւրել շահեցար , Արծուիդ իմ , ուրախ լեր . իսկ եթէ մեռեալ եւ խցեալ իցեն ականջք տոամբք նախապաշարեալ ագիտութեան , ոհ , 'ի զուր աշխատիս , կարճեա զգրիչդ , նիստ ընդ Մովսիսի , լաց զՀայաստան :

ՀԱՅԿԱԶՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐԳ

'Ի ՏՓԽԻՍ

Հայաստանէն գաղթող ժողովուրդը թէպէտ ամէնքն ալ ապերջանիկ դժբախտ կը համարուին իրենց բուն հայրենեաց գրկէն հեռանալով . բայց անոնցմէ քիչ մասը բարեբաղդ գտնուեցան , որոնք որ հայրենեաց երկրի հորիզոնին եզերքէն չուզեցին այնչափ հեռանալ : Մանաւանդ վերջին դարուս գաղթականները , որ Պարսկց եւ Արարատեան կողմերէն մինչեւ Վրացւոց մայրաքաղաքը Տիֆլիսը եւ Ռուսաստանի ուրիշ մօտաւոր քաղաքները իրենց բնակութիւնը հաստատեցին : Արեւ միտքը առ այժմ այն չէ , որ Տիֆլիս բնակող հայկազանց վրայ ընդարձակ տեղեկութիւններ տամք ամէն պարագաներով , թէ ի՞նչ ժամանակ գաղթեր են . կամ իրենց հին եւ արդի վիճակներու մէջը որչափ փոփոխութիւններ եղած են . այս կը թողումք ուրիշ պատահ ժամանակի լիովին տեղեկութեամբ գրել : Միայն կուզեմք այս անգամը Տիֆլիսու հայ ուսումնասիրաց ու միանգամայն աստիճանաւոր մեծասիր-

Թամ Ազգասիրաց նորոգեալ եռանդը ընդ հանուր հայկազանց ծանուցանելու մեր Արծուոյն նորաթուիչ թեւերով . որպէս զի ուրախութեամբ հրձուին այն ամէն Ազգասիրաց վաղեմի տը-
խուր սրտերը , թէ Հայաստանը իր հին ծերութենէն սկսել է նորոգիլ մանկութեան հասկով ինչպէս Արծիւը : Արդարեւ անպատմելի ցնծութիւն կը գդան հեռաւոր երկիրներու մէջ բնակող դաղթական Հայոց ականջները , երբոր ազգային յա-
ռաջադիմութեան ձայներ կը լսեն :

Արարատեան հորիզոնին եզերքը բնակող Տփիսիոյ հայազ-
գի ուսումնասէր Անձինք՝ գիտես թէ գիշերային տխրապատ-
քունէն արթննալով գլուխնին վերցուցած զուարթ աչքով կը-
հային դէպ 'ի բնակազաւառն հայրենիքը . որոնց հեռադէտ
աչքին Մասեաց սրբազան դադաթը յաւերժագիր արձան մը
կը ձեւանայ եւ կը յիշեցնէ՝ իւրենց նախկին խանձարուքն ու
որորանը : Մասիս , որ իբրեւ մայր , դայեակ եւ սնուցիչ եղած է
թորդոմածին զաւակաց՝ բաւական չի համարեր իր յաւերժայի-
շատակ արձանը հեռուանց միայն կարդալ տալու . հապա շատ
անդամալ իւր մայրական քաղցր կաթին բոլոր ստիներէրը
բացած , երկար ժամանակէ 'ի վեր իր դրկէն սարսուցեալ կա-
լօտ որդիքները կը հրաւիրէ դէպ յինքն . որպէս զի Արարա-
տեան՝ Հայոց ազգին միայն նուիրուած նոր Աւետեաց երկրին
առատաբուղիս կաթը ծծելով՝ զարդանան ու բարգաւաճին
նախնի հայ քաջազանց հայրենասիրական հսկայապելլ՝ հասա-
կով :

Յիրաւի Մասեաց մայրենի կաթին փափագող ամէն դադ-
թական համազգիներէն աւելի կարօտ կը տեսնամք Տփիսիու
ուսումնասիրաց կաճաւը . որոնցմէ շատերը մինչեւ սուրբ Էջ-
միածին ուխտի երթալով՝ կրօնական սուրբ կաթն ջերմեռանդ
աստուածալաշտութեան սիրով ծծելէն ետքը՝ հայրենասիրական
անուշաճոր կաթն ալ կը ծծեն , ու նոր նոր սնունդ կ'առնուն :
Այն տեղ կը դիտեն մէկ աչքով Արտաշատու լուսաբուղիս
վիրապը , երեսունից օրիորդ այ նահատակաթեղ արիւնազարդ

տւրք հնձանը. Գրիգոր, Տրդատ եւ Խոսրովի դուխտ. մէկը վաթսուհօրեայ քարոզութեամբ Աւետարանին լոյսը Արարատայ խաւարապատ երկրին վրայ կը տարածէ, միւսն իր հախայարձ ուսերով Մասեաց վիմուտ կողերէն ահագին սիւները կը կրէ. մէկն ալ Վաթուղիկէ եկեղեցւոյ նոր հիմանց փորուածքէն հողերը գոգին մէջը լեցնելով շուտ շուտ գուրս կը թափէ :

Հայրենասէր այցելուք Տիխիսու այս Աստուածային այցելութեան տեսարանները երեւակայելով իրենց կրօնական ոգին դարձեալ կաճի ու կը զարդանայ, այն կատարեալ հասակը, որ մինչեւ երկինք կամբառնայ. բայց միւս աչքով ալ երբոր կը դիտեն Վաղարշապատու վաղնջուց ծածկուած Խոսրովու, Տրդատայ մեծաշէն արքունիքը, Արշակունեան թագաւորութեանց Ասիւծաղբօշ գահը, չորեք հարիւր ազատորեար նախարարաց փառաշուք առեանը, Արարատեան լայնածաւալ դաշտին՝ դրօշու գրօշու ձիաւորեալ սպայից ահեղագունիկ զօրահանդէսը, ասով ալ իրենց հայրենասիրական ոգին կը մնանի. այն հասակը, որ Հայաստան երբեմն Տրդատայ, Վարդանայ ու Վահանայ նուիրեց :

Այս հայրենաշրջիկ Այցելուք Մասեաց մայրենի կաթէն չըկշտանալով՝ կը դիմեն մինչեւ Տարօնոյ գաւառը. Ախուրեան գետին եզերքը նստելով կը նային եւ կը զարմանան անոր կարմիր կարմիր ալիքներուն վրայ, որ Անուոյ դժբաղդ գաւաղայ ջերմիկ արիւնով ներկուած է : Նոյն մեծահոգակ Մայրաքաղաքին այցելութիւն ընելով՝ կը դիտեն անոր մեռելափայ պատկերը. Գորօրինակ որբացեալ գաւաղունք իրենց նոր մեռած մօր մահճին բոլորովն շարուած կական բարձեալ կուլան. այսպէս ալ Անուոյ մօրէն հեռացած գաղթական գաւաղները, որոնք երբեմն իրենց կենդանի մայրը թող տարով՝ հեռու աշխարհներ գնացին. բայց երբոր կրկին ետ դառնալով կըյուսային իւրեանց մայրիկը ողջ գտնալու. աւա՛ղ, կը տեսնան որ վաղուց մեռած է, բոլոր մարմնոյն այն վայելչատիպ գեղեցկազարմ անդամները, ո՛հ, սրը թաղուած որ բաց : Աւայ-

նուհետեւ ուշադրաց ըլլալով՝ մեռեալ մարմնոյն վրայ կիյնան
կը թաւալին եւ կը կանչեն լալով, «Ո՛ր ե՛ն մայրիկ քո բազմածը-
նունդ զաւակները, «Ո՛ր է քո ամենազարդ շքեղութեամբ պայ-
ծառացած Բաղրատունեան առագաստին վայելուչ հանդեր-
ձանք. «Ո՛ր ե՛ն պսակաւոր փեսայք քո, Աշոտ, Սմբատ եւ Գա-
գիկ. «Ո՛ր ե՛նք հազար ու մէկ եկեղեցեաց բազմաբեր ժողո-
վուրդք : Եղի՛ւկ քեզ, մայրիկ կամարաշէն Տաճարներդ խո-
նարհեր են. նուիրամատոյց Սուրբ սեղաններ հողով ծածկուած՝
լուեր են երգեցիկ մանկունք. քաջարանց մահարձաներուդ
կէսը թաղուած կէսը դուրս. ընդարձակ հրապարակներդ
խցուելով՝ ալ չեն բազմիր աթոռի վրայ հարկեւոր ալեզարդ
ծերերը : Հաղարամեայ մեռեալ մայրիկ, մինչեւ յե՛րբ պիտի
ողբան սոսպէս քո վրադ որք մնացեալ որդիքներդ : Չորեքօր-
եայ մեռեալ Ղազարոսին այցելուն Յիսուսը՝ քեզի ալ այցե-
լութիւն պիտի՞ դայ օրմը. անոր կենդանատու ձայնէն արթն-
նալով պիտի թօթափեն անդամներդ. կաշկանդող այդ հազար-
ամեայ հինցած փառած պատանքդ. ու կրկին անգամ կիսա-
թաղ դերեզմանէ դ վեր կանդ՛նելով հսկայաճեմ ընթանաս. թող
տեսնէ աշխարհ ու զարմանայ քու վրադ : Այսպիսի սրտա-
ռուչ հառաչանքներով փոքր ինչ ողի առած Անուշ ողբասէր
զաւակները արցունքով լեցուած աչքերը սրբելով կը հրա-
ժարին մայրաթաղ շիրմէն ու Բարձր Հայոց սահմաններէն ան-
ցնելով կը ողջունեն Տարօնոյ ճոխ գաւառը. ուր որ Մամիկոն-
եան քաջազունք Մուշեղ, Վահան ու Սմբատ սեփհական հայ-
րենեաց ազատութեան համար արիսկան նահատակու թեամբ
մարտ մղեր են ահեղ թշնախաչ դէմը :

Այս տեղն ալ ինչպէս որ Սուրբ Իման տեղը կրկին կեր-
պով կը վառի հայկազն ու խաւարայ սիրտը. մէկ կողմէն երբ
որ լուսաւորչեան ձեռնաց նախահիմն սուրբ աստուծոյ մանե-
լով՝ օրբոյն Կորապետի հրաշագործ տապանին ամենայն ջեր-
մեռանդութեամբ համբոյր մատուցանելով՝ իրենց ուխտ կը
կատարեն. մէկտէլ կողմէն ալ բաջին Տրդատայ նախկին նահա-

տակութեան ասպարէզ Մամիկոնեանց տոհմին վայելչազիր երկիրներ դիտելով՝ հայրենասիրական եռանդնին կը վառի եւ կը հառաչեն երբոր կը տեսնեն որ տարաբախտիկ Տարօն իր նախնի պերճութենէն վերջին թշուառութեամբ նուազեր է :

Երանիթէ Տփիսիոց հայկազունք կատարեալ հայրենասիրութեամբ գոնէ Մուշէն դառնալու ատեննին անգամն ալ Վասպուրական երկրին այցելութիւն ընէին, Արծրունաշէն հնութեանց եւ Ներսիսաշէն բազմաթիւ վանորէից վայելչութիւնները տեսնային. բայց աւա՛ղ այս հայրենասիրական մասէն՝ ճմարիտ խօսելով պակաս մնացեր են. միայն թէ այս ճառիս կարգը երախտագէտ սրտով կուզեմ յիշատակել Տփիսիսեցի աստիճանաւոր մեծի Վայսերութեան Ռուսաց Թիվթուլեանից Սովէթնիք եւ Քափալիէո Աղա Աղբքսանդր Լազարեան Թաւհիրեանց, որ բարձր Հայոց Վարնոց քաղաքէն կը գլխիտ Վարագայ լեւը, կը տեսնայ հոն նոր Արծուոյն ձագերը մօրը թեւերուն տակը ամբողջութեամբ բերանին բացերէն կուտ կը խնդրեն : Ուստի այս ձագերուն կարօտութենէն յիշեալ Ազգասիրին սիրտը կը շարժի եւ տասն արծաթ մանէթ նուէր կը շնորհէ Վարագայ դպրոցին իբրեւ օրապարէն հաց կարօտեալ ձագերուն եւ կը խոստանայ Աղա Խաչատուր Խանին տէր Ներսիսեանց՝ ողջութեամբ Տփիսիս հասած ժամանակը մեծ նպաստութեամբ սուսերիչ լինել Արծուոյն՝ եւ որչափ կարելի է անոր նպատակին օգնել ազգասիրական ոգւով :

Պատեհ ժամու կը թողումք գովութեամբ հռչակել Տփիսիոց Հայ ուսումնասիրաց անուաները. որոնք բաժանորդ գրուած են Արծուոց ամսաթերթին վաթսուներէն աւելի : Ար յուսամք, որ թէ յիշեալ Ազնուականին ջանիւք եւ թէ Արծիւը ճանչրցող ուրիշ ուսումնասէր անձանց յորդորանքով օրըստօրէ պիտի ելնայ բաժանորդաց թիւը. որով Տփիսիսեցիք ալ իրաւամբ պարծենան Պօլսեցւոց չափ. ուսման ասպարիզին մէջ հաւասար յառաջադիմութեամբ ընթանալով :

ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ԱՒԵՐ ԵՎԵՂԵՑԻ ԻՇԽԱՆԱՅ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՎԵՐԻՆ ՎԱՐԱԳ

Ստորին վարագայ Արծրունաշէն կիսակործան սուրբ Տա-
ճարաց վրայ աւերակասէր բռնոց նման բաւական ժամանակ ցա-
ւալի հառաչանքներով ողբալէս՝ եւ նոցին հին եւ արդի վի-
ճակն ըստ կարեաց նկարագրելէս ետեւ, երբ որ ալ Մայիս ամ-
սոյ ամենագեղ օդոց պայծառութիւնը, երբեմաշունչ՝ մեղմա-
ծաւալ, կենսանորոգ անուշիկ սղոխաց հետ զիս կը հրաւիրէր,
դէպ 'ի վերին վարագն գնալով, աշխարհիս ստեղծման առաջին
դարէն մինչեւ հիմայ անկորուստ պահուած բնութեան սքան-
չելի տեսարաններն ստորագրել. կարկարջահոս վրտակներուն
եղեմահոտ մարգագետիններուն եւ անմահ աղբերականց վրան
նստելով : Բայց կրնայիս որ՝ նոր օրինակ մէկ տրոմալի առար-
կա մը մեզ դիմադրաւ բարեւելով՝ հիւսիսէն 'ի հարաւ կը շեղէ
ճանապարհնիս :

Ստորին վարագէն կէս ժամ 'ի հարաւ խորաձորի մը միւս
կողմ, Աւեր Եկեղեցի եւ Իշխանաց Աղբիւր ըսուած տեղեր
կան. որոնց միայն անունները այս չափ մնացեր է աւանդու-
թեամբ ընդ աղօտ : Իսկ Թէ ի՞նչ Եկեղեցի է կամ ի՞նչ Իշ-
խանաց աղբիւր է եւ առաջիկայ աւերակները ի՞նչ աւերակ
են որ 'ի հնութենէ դարուց աննշմարելի խաւարին մէջ թաղուած
կը մնան : Տեղոյն դիրքը 'ի հիւսիս դէպ 'ի վարագայ վանքն
դարձած է. պարարտահող արտելով եւ խոտաբոյս մարգերով
զարդարուած . այն պէս որ՝ շրջակայ գիւղօրէք երանի կը-
կարգան վարագայ վանից նոյն պարարտ հողերն եւ առատ
ջրեր ունենալուն համար, որոնք յիրաւի անգին դանձ են ճա-

տար երկրագործի մը ձեռք թէ անասուն անուցանելու եւ թէ սերմանելու համար :

Աւեր Եկեղեցւոյ տեղն հիմա դարաբլուր մը դարձած է . որուն զիրքը ցոյց կուտայ թէ բաւական մեծութիւն ունի եղեր . իւր չորս բոլորովը գերեզմաննոցի խաչաքարեր շատ կան , ըստ Հայաստանեայց հին եւ ոչարդի սովորութեանը : Բայց վրանին միայն թէ խաչ կը նշմարուի , յիշատակարան բնաւ չը կարողինք գտնալ : Կան խաչաքարեր ալ՝ որոնց մեծագոյն մասը հողոյն մէջ թաղուելով՝ միայն թէ գլուխն ին դուրս ցցուած կրեւի . հնութեան դարուց ահեղ կռահակներուն հետ պատերազմելով յաղթուած է , խնայեալն աւերելութեամբ կատաղի ծովուն մտանեալ եւ դու խն մինակ կեանագրաւ արիքներէն դուրս մնացած եւ մերձ ՚ի մահ տանջուած մը : Շատ հաւանական է . որ ասոնց խորերը որոնելով՝ հընութեան նշաններ ըստ բաւականին կրնայ ձեռք բերուիլ , բայց Հայաստանը՝ հետախու թէսն մարին Արաքսի լիկերու դեռ ժամանակ պիտի : Նոյն աւեր եկեղեցւոյ եւ գլխի աւերակաց տակէն կը բզլի խնայաց աղբիւր ըստած բազմաւ համ վտակը . որոյ պարզորակ ջուրը գոյնզգոյն ծաղկանց եւ կապուտակ բենէրփուկներուն դարար արմատին տակէն օձակիր պիկ սողալով ծաւալմամբ վայր ՚ի վայր ՚ի խորածորն կ'իջնէ :

Կարօտակէզ սրախ շատ որոնեցի այն հին Աշխարհի Հայ բենաշէն բնակչաց եւ այն պատկառելի իշխանաց գոնեա՝ մէկ փոքրիկ յիշատակութիւնը գտնել , բայց անագորոյն բազմի դլացաւ ՚ի տալ : Այն հին Աշխարհի Հայկազուն իշխանաց զբօսանաց տեղի կարծուած աղնիւ Աղբիւրին գլուխը նստայ . բայց փոխանակ նոցին հանգոյն ուրախանալու եւ զուարճանալու՝ աղի արտասուաց կսթիլներ նոյն բարեհամ վտակին հետը խառնելով՝ տխուր դիմօք Թորգոմեան տան վաղանջուկ փառացը վերայ լացի : Ո՛ւր են այն փռաւար Հայի եան իշխանները . որ այս քրոյս վրայ բազմելով կը զուարճանային . ուր են այս տխուր աւերակաց բնակիչները , սրտը սոյն ամայի

լեռնամէջ տեղեր մարդատուենկ դրախտ մը դարձուցեր էին :
 ո՞ւր են Սուրբ Եկեղեցւոյ ջերմեռանդ պաշտօնեայք ար
 դեօք Սուրբ կտակարանաց եւ ալէլուից քաղցր ձայներ , քո
 մէջդ արձագանք առեր են սուրբ եկեղեցի . . . :

Գնա՛ ուղեւոր, դնա՛ կրսէ Հայոց հրեշտակն, դեռ անա-
 դորոյն բախտն թորդոմեան չէ կշտացեր զանի չարչարելէն .
 գնա՛ բնութեան անկորուստ պահած ձիրքերուն վրայ զարմա-
 ցիր ու տես , թէ ինչ աստիճան սիրեր է Աստուած զհէգ Հայ-
 աստան . թէ գերբնական զարմանահրաշ ձիրքերով եւ թէ բնու-
 թեան ամենագուարձ տեսարաններով : Տիեզերաց մէջ որ ազ-
 գին շնորհուած է՝ դէմդ կանգնած Վարագայ Սուրբ լե-
 րանդ նման երկրորդ գողգոթամը , որուն գլուխն Տէրունի
 փրկադործ Խաչի կարմիր դրօշակն կը ծածանի եւ ստորոտին
 վրայ առաքինութեաց երանելի դասն ձիաւորեցաւ վստն նո-
 րոգութեան հին Հայաստանիդ : Սիրեց արդարեւ Աստուած
 զազգն Հրեական . բայց տես՛ թէ չոր եւ արեւակէզ կլիմայէ
 մը 'ի զատ՝ ուրիշ մէկ զուարճալի երկիր մը շնորհեց այն սի-
 րելի ազգին . ուրեմն լաւ արթնցիր՝ , Հայաստան , որ քեզ կրբի-
 նակի կերպով սիրեր է Աստուած . եւ պիտի սիրէ՝ եթէ զօրա-
 ցեալ տգիտութեանդ յաղթես . եթէ իմաստութեանդ լուսա-
 լիւ ճրագ վառ պահելու անխոնջ աշխատիս :

Խշտանաց Աղբիւրէն քիչմը վար խորաձորին միջէն առա-
 տաջուր վտակմը կը հոսէ , որ վերին Վարագայ վայելչագեղ
 սահմաններէն իջնալով այն Սուրբ լերան եղեմահոտ ծաղկանց
 բուրմունքներն գլտես թէ իւր մկանանց վրայ բառնալով
 ուրախ ուրախ վար կիջեցունէ : Ասոր հասանաց դըղըջա-
 ձայն սիրուն բարեւներն շարունակաբար ընդունելով սկսե-
 ցինք վեր ելնել :

Սէկ քառորդովմը չափ նեղ եւ խորունկ կիրճ մըն է , որուն
 յատակը փխրահող լինելուն ջուրը տորեր տարեր է , որով եւ
 այս զարհուրելի խորութեանը հասածէ . անկէց վեր բիւքբիւ
 կը սկսեն , լերան կատարներն՝ փոքրիկ վտակներ եւ դարատափ

խոտաւէտ անեղերն շարունակել : Զարմանալի է այս տեղի ջրանցից մեծ առուէն որ ստոյին Վարագայ արտորէլց եւ Զաղացքը զարժունելու համար ելեւելի մեծագործութեամբ շինվեր է : Ասոր մեծագործութիւնը հին դարուց միջի Շամիրամ Թագուհւոյն հրաշալեացը կը համեմատի . վասնզի ջրոյն սաստիկ արագաշարժ ընթացքը 200 ոտնաչափ խորածորի վերին անմատչելի կողէն քալեցնելով տեսակ մը կապուսագոյն եւ Թուխ ապառաժներու մէջէն ծակելով, կոտրելով, տաշելով եւ հիւսելով ճամբայ բացուած է : Զարմանալի եւ վայելագեղ են նաեւ նոյն առուին եզերքը առատութեամբ բազմացած ջրային ճերմակ ուռեղիներ (խպահան) . որոնց դալարադեղ կանանչութիւնը նոյն արեւակէզ լեռան վերին չորացեալ կողերն կը զարդարեն եւ փայտն ալ ողորկ եւ պնդակազմ լինելուն համար շատ տեսակ գործիքներու պիտանացու է միշտ :

Այս տեղ ահագին բարձրութեամբ առ ՚ի կող վեր ելած է Վարագայ երկձիղի լեռն . որուն յատակի տափարակ եւ առ ՚ի կող հովիտները բընութեան ամենագեղ ծաղկունքներով վայելչացած են . Մայիսի միջէն մինչեւ Յուլիսի վերջերն եղեմաւորն ի դրախտ մը կը դառնայ այս լեռն մէջ վայրս . անկաւճիտ ջրերուն պարզութիւնը զարմանք կը բերէ տեսողաց եւս առաւել նոցին խոխոջածայն կարկաջիւնը որ յոգնատեսակ թռչնոց ոլորածայն երգոց հետ խառնուելով շրջապատ օդը կը թնդացնեն , եւ բիւրազդի ծաղկունքն ալ որ մինչեւ անդամ քարերուն սրտառուածքէն դուրս եկած են յիրաւի զարմանալեաց զարմանալիք կը ծնանին : Գլտես թէ բնութեանս արարիչ դեռ ստեղծագործութեան « Բուսուսցէ երկիր զբանջար խոտոյ » բառը նոր լմացուցած է , Գ . Յէնեւրն Գաղղիացոյն ճարտար դրչին կարօտ է որ ՚ի վեր քան զԵդիսական Դարասքըսուած վայրն նկարագրէ այս նուիրական լեռան ամենագեղ վայելչութիւնը :

Հիւսիսէն ՚ի հարաւ ժամու կէսուան միջոց կը տարածի այս զուարճալի հովիտ շարունակ ծաղկայատակ գեղեցկու-

Թիւնը . որուն հիւսիսային ծայրը՝ բարձր եւ ծովաֆայեաց դրից վրայ ամայութեան մէջ տրտմութեամբ կը հեծեն Վերին Վարագայ տիուր աւերակները , որոնք հին աշխարհին ջերմեւ ռանդ կրօնասիրաց ինչ աստիճան Աստուածային սիրոյն մեծի օթեւան լինելուն զօրեղ ապացոյց են : Տխուր եւ ամենատը խուր է այս աւերակաց տեսարանը . որովհետեւ երթալով եւս աւելի բնաջինջ պիտի անհետանայ ասոր ցանկալի յիշատակութիւնը . մէկ կողմանէ ձմեռնային օդոց խտութիւնը սաստիկ թշնամի է ասոր կենաց՝ միւս կողմանէ ալ կրօնաւորական կենցաղավարութեան պաղութիւնը . մի միայն այն երջանիկ դարուց ջերմ աստուածապաշտից սիրոյ ջերմութիւնն էր՝ որ երկար դարեր նոյն իսկ օդոց բռնութիւնը բարեխառնելով՝ այն պիտի ամայի լերանց գըլուխը տուն Աստուծոյ եւ տաճար փառաց կանգնեցին : Ասկէց ետեւ նոր կենդանութեան յոյսը շատ հեռացած է : Այս տարի մայիս ամսոյն 25 ին յաւուր տօնի սուրբ եկեղեցւոյ հնասէր վերադասուց Վարագայ վանից՝ նոյն փոշիացեալ սուրբ կամարներուն տակի կործանեալ սրբաակիր վէմը կրկին ուղղելով , նոյն առաւօտ վրան փրկագործ պատարադ մատուցանել տուաւ . 'ի մխիթարութիւն բազմաթիւ ջերմեռանդ ուխտաւորաց՝ եւ 'ի լրումն իւր հայրենասէր եւ հնասէր անվերջ բաղձանաց եւ կարօտութեան :

Այս կիսակենդան աւերակներէն քիչ մը վեր երանելի Թօթիկ ձգնաւորի այրը կայ՝ որուն մէջ իւր Յովէլ անունով աշակերտին հետ այն աստիճան ջերմեռանդ սրտիւ իւր նուիրական ուխտը կը կատարէր , որ արժանի եղաւ 'ի վաղուց ընդ կորուսեալս համարեալ Հռիփսիմեան Սուրբ Խաչը տեսանել զգալի եւ շօշափելի կերպարանքով : Բռնն այրը նեղ անցքով մեծ վիմաքարի մը տակ տարածուած դատարկութեան միջոցն է . ուր ուղղակի կանգնել հնարաւոր չէ առաստաղին ցածութեան համար : Ասկէ երեք քառորդի չափ սաստիկ զառ 'ի վեր եւ ամբողջ տեղուանքէն գրեթէ մազլացի վեր ելնելով վը հասնի այն սուրբ տեղն՝ ուր որ երանելի կոյսն Հռիփսիմէ

լուսաբերն Հայաստան աշխարհիս կենսունակ Սուրբ Խաչա-
ման Բրիտտոսի ամփոփեց, կռամոլութեամբ խողացեալ Հայոց
աշխարհին հին բնակչաց դժոխսաշաւիղ ոռոյց կոխան չլինելուն
համար :

Եւան այս բարձրութենէն որ գրեթէ 5000 աշխարհա-
գրական ոտնաչափէն աւելի է, վանայ ծով եւ բոլոր նահանգն
հայելիի նման որոշակի եւ ճշգրէ կերեւին. ընդ որս եւ հին
աւուրց Մասեաց ձիւնապաղպաջ զլուխն՝ եւթն օրեայ հե-
ռաորութեան միջոցէ : Այս լեւան սեպապետ ծայրերն բոլոր
թխապոյն փխրաբար են. որոնք շարունակաբար ձեան եւ անձ-
րեւաց ջրեր ծծելու շատ յարմարութիւն ունին. ստոր հա-
մար է որ իւր գողաձեւ ստորոտները առատաջուր աղբե-
րակունք շատ կրկնազեն : Զով (սէլին) եղած տարին իւր
վրայի ձիւնը մինչեւ յուլիս վերջեր կըլիմանայ. թէպէտ իւր
վան քաղաքէն հեռաւորութիւնը շատ քիչ է. բայց բարձր դը-
րիցը պատճառաւ օդին կողմանէ երկուքի մէջ տեղ երեւելի
տարբերութիւններ կան. մաքրութիւն եւ պարզութիւն օդոյ
խակապէս կը թաքաւորէ այս լեւան թէ ստորոտներ եւ թէ
ձորամէջ տեղուանք. որով եւ գարնան եղանակին գաւառիս շատ
բազմութեամբ հիւրեր իրէն կը հրաւիրէ : Երեւելի են այս
լեւնամէջս նա եւ Ապարանջան աղբիւր, Բերբաթ այլք եւ
Ղիւնաւորաց այր ըստած տեղուանք. որոնց վրայօք աւանդու-
թեամբ խօսուած պատմութիւններ դէպ եղած ուրիշ ժամա-
նակիմը թողուցինք : Հետաքրքրութեան արժանի բան է նա
եւ դժոխսաձոր (ճէհէննէմ պէրէյ) ըստած տեղն որուն հողի գոն
կապոյտ եւ միջի քարերն սաստիկ թուխ եւ վայլուն են. ճար-
տար երկրաբաններ ճերու կարօտ է. որ ստուգուի թէ այս պա-
տահումներ հրաբխային զօրութենէ յառաջ եկած են թէ հո-
ղոյն ներքեւ հանքային անխոյ համբարներ կան ղրգուած :

Այսքան տեղեկութիւններ եւ ղխողութիւններ կրկին վա-
րադայ եւ իւր շրջակայիցը վրայ բաւական դատելով, վան բա-
ղաքի եւ իւր շրջակայից վրայ խօսիլ սկսիմք :

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԳՈՐԾԱԿԱԼԷՐ.

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ, Մկրտիչ Տ. Ատոմեան 'ի գրանոցի Վասպուրական
Արժուոյն :

ԿԱՐԻՆ, Խաչատուր Խան Տ, 'Ներսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ, Մ, 'Արիպճան Աղա Մ, Շողիկեանց :


ՏՐԱՊԷՈՒՆ, Լղաճան Աղա Յովհաննիսեան :

ՊՕԼԻՍ, Պ, Յակովբ Աղուանեան վանեցի 'ի Պալթաճի Խան :

ԶՄԻՒՌԻՆ, Պ, Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցոյ :

ԲԵՐԻԱ, Յովհաննէս Աղա Միսաքեան :

ՍԱԼԱՄԱՍ, Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց, մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :



ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի վան, 'ի Կարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2 ու կէս
Օսմանցիքսան ղուրուշնոց արծաթ Մէճիտիէ :

Ի Պօլիս, 'ի Զմիւռին, 'ի Բերիա, երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան, այսինքն 'ի Տփիլիս, յԱ-
ղէքսանդրպօլ, 'ի Դամլէժ եւ այլն, չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 6 ղուրուշ : Ճանապարհին ծախքը
Խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԱՀԵՆ ՀԱՐՅ

ՄԵՃԻՆ ՆԵՐՈՒՄ ՊԱՐԺԵՆ : 111

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ, ՀԱՅՐԵՆԱՀԵՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

ՄԵՃԻՆ ՏԻՔՐԱՆ ԵՐՐԱՆԻՔԻՆ : 120

ՀԱՅԿԱԳՐԱՆ ՈՐՈՇԱՆԻՔԻՆ ՆԻ ՏԻՔԻՆ : 128

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՀԽԱՐՀԱՅ

ԱՆԵՐ ԵՂԵՂԵՅԻ, ԻՂԽԱՆԱՅ ԱՂԵՒԵՐ ԵՆ ՔԵՐԷՆԱՐԱԳ. 133

Ա. ՔԵՐ. ԻՂԵՂԵՅԻ.